№ 90 Մայիսի 25 (Յունիսի 6) 1882 Մայիսի 25 (Յունիսի 6) № 90

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Ներքին լուրեր։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Գերմանիա։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։ —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։ — ՖԵԼԻԵՏՕՆ

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են որ այս օրերս կոմս Լորիս-Մելիքով պատիւ ունեցաւ ներկայանալու Թագաւոր Կայսրին Պետերգոֆի մէջ։

—

Մի անյայտ պարոնից ստացանք 8 ռուբլ բաժանորդագին Վիէննայի «Journal d'Orient» լրագրի։ Նախկին 92 ռուբլ դումարի հետ կանի 100 ռուբլ։ Այդ դումարը փոստով ուղարկեցինք Վիէննայի լրագրի խմբագրութեանը, մայիսի 22-ին, շաբաթ օր։

—

Մենք ուղարկում ենք «Մշակի» իւրաքանչիւր համարից մի քանի օրինակներ Մոսկվայի աշխարհանդէսը։ Համարներից մինը յատկապէս հանդիսի համար է նշանակված, որտեղ նա իր տեղը պէտք է բռնի Ռուսաստանի մամուլի միւս ներկայացուցիչների շարքում, իսկ մնացած համարները հատով կը ծախվեն ցանկացողներին։

—

Մինչև որ Թիֆլիսում անընդհատ անձրևներ են գալիս, Ռուսաստանի գրեթէ բոլոր ներքին գաւառներից գանգատներ են լսվում որ անձրևներ չեն գալիս, գրեթէ ամէն տեղ, մանաւանդ հարաւային Ռուսաստանում և Կրիմում տիրում է երաշտութիւն և ցանքերը չորանում են։

—

«Каспій» լրագիրը ասում է որ իշխան Դոնդուկով-Կորսակովի Լէնկորանի մէջ եղած ժամանակ այդ քաղաքի բնակիչները խնդիրք ներկայացրին իշխանին միացնել Լէնկորան Բաղուի հետ հեռագրական թելով։

—

Հրէաների դէմ արած անկարգութիւնների առաջն առնելու համար ՆԻԿՕԼԱԵՎ քաղաքի դումայի մէջ ճանաչուր պ. Գէ առաջարկեց խնդրել կառավարութեանը հաստատել քաղաքի բոլոր կալուածատէրերի մէջ փոխադարձ համերաշխութիւն, որով և կը պաշտպանվի իւրաքանչիւրի սեփականութեան իրաւունքի անբռնաբարելի լինելը։ Դուման միաձայն ընդունեց այդ առաջարկութիւնը և որոշեց այդ մասին խնդիրը ներկայացնել կառավարութեանը։

—

Յայտնի է արդէն հեռագիրներից որ ՄՈՍԿՎԱՅԻ եօթանասուն ամենանշանաւոր առևտրական տներ ներկայացրին ֆինանսների մինիստրին մի խնդիրք, որի մէջ խնդրում են կառավարութեանը չը գաղթեցնել Մոսկվայից հրէաներին, քանի որ հրէաները միջնորդ են լինում Մոսկվայի, կամ առհասարակ Ռուսաստանի կենտրոնական առուտուրի և հարաւային Ռուսաստանի առուտուրի մէջ։ Մոսկվայի վաճառականները իրանց խնդրիքի մէջ ասում են որ եթէ իրանք մեծ կրեդիտ էին տալիս հարաւային և արևմտեան Ռուսաստանի արդիւնաբերողներին, այդ այն պատճառով էր, որ ճանաչում էին Մոսկվայում զետեղված հրէաներին և նրանց հաւատ էին ընծայում, որպէս արդիւնաբերողների ազէնտներին։ Եթէ հրէաները հեռացրած կը լինեն Մոսկվայից, ասված է խնդրքում, ռուսաց կենտրոնական առուտուրը իւրաքանչիւր տարի մի քանի միլիոնի վնասներ կը կրի, Մոսկվայի առևտրական կապերը արևմտեան և հարաւային Ռուսաստանի հետ կը խզվեն և ռուս առուտուրին մեծ աջողութեամբ կը սկսէ այն ժամանակ մրցութիւն անել արևմտեան Եւրոպայի առուտուրը։

—

Լուր կայ որ «Русская Рѣчь» ամսագիրը չուտով կը խափանվի բաժանորդների սակաւութեան պատճառով։

—

ԹԻՖԼԻՍԻ մէջ այժմ առուտուրը շատ ընկած դրութեան մէջ է։ Երբէք չեղած բան էր որ քաղաքիս գլխաւոր փողոցներում խանութները փակված մնային, իսկ այս րօպէիս ուր և նայէք, ամէն տեղ տեսնում էք փակված մագազիններ։

—

Լրագիրները լսել են որ կոմս Լորիս-Մելիքով դիտաւորութիւն ունի այս ամառը Կովկասում անցկացնել։ Լրագիրներից մի քանիսները աւելացնում են որ, լուրերին նայելով, կոմսը գալու է մեր երկիրը ոչ թէ որպէս մասնաւոր մարդ, այլ նրան, որպէս երկրին լաւ տեղեակ անձին, կը յանձնվի Կովկասում կատարվելու վարչական վերանորոգութիւնների ծրագրի մշակելը։

—

«Արձագանքի» մէջ կարդում ենք, որ Թագաւոր կայսրի թագադրութեանը ներկայ գտնվելու համար Թիֆլիսի դուման ընտրել է իր միջից հեռանալ անձանց, որոնք և պէտք է ուղևորվեն Մոսկվա. քաղաքագլուխ Ա. Մատինով, ճարտարներ Ա. Մանթաշև, Ա. Թայիրով, Ա. Փրիդոնով և Ս. Զարապով։

—

Շնորհակալութեամբ ստացանք պ. Գ. Իզրաչեանցի «Հայի բզէզ» բրոշիւրը, որ տպված է Մոսկվայում։ Հեղինակը խնդրում է մեզ յայտնել որ նա նուիրում է իր այդ բրոշիւրից 100 օրինակ հայ գիւղական ուսումնարաններին։ Այդ պատճառով պ. Իզրաչեանը խնդրում է հաղորդել իրան այն անձանց հասցէները, որոնց կարելի լինէր ուղարկել բրոշիւրը յիշեալ գիւղական դպրոցներին հասցնելու համար։ Նամակը մենք ստացանք Բաղուից, բայց բրոշիւրի վրա տպված է հեղինակի հետեւեալ հասցէն։ Шуша, Григорію Христофоровичу Юзбашеву. Գիրքը փնել կարելի է թէ հեղինակի մօտ և թէ Թիֆլիսում «Կենտրոնական գրավաճառանոցում»։ Գիրքը պատկերազարդ է. նրա մէջ նկարագրված է հայի բզէզի յատկութիւնը և ցոյց են տուած այդ վնասակար միջատը կոտորելու միջոցները։ Բրոշիւրը բաղկացած է 70 երեսից և արժէ 40 կոպէկ։

—

Վերջին լուրերը հարաւային Ռուսաստանից աւելի մխիթարական են. քանի մի օր է որ սկսեցին անձրևներ գալ և ցանքերը լաւանում են արդէն։ Այժմ կրկին յոյս կայ աջող հունձի։

—

«Голосъ» լրագիրը հաղորդում է որ Ս. Պետերբուրգի իրաւարանական ընկերութիւնը իր վերջին նիստում միաձայն որոշեց, ըստ սկզբունքի, որ կանանց իրաւունքները ժառանգութեան մէջ պէտք է հաւասարված լինեն մարդկանց իրաւունքների հետ։

—

Լսում ենք որ սպանված եօթ հոգի մշակների աղգականները Նոր-Բայազէտից եկել են Թիֆլիս։ Հիմա յարմար դէպք է ներկայանում, ուրեմն, հասցնել նրանց անմիջապէս նիւթական օգնութիւն։ Մեզ մօտ եղած 50 ռուբլ մինը կը տանք նրանց և յոյս ունենք որ նոյնը կանեն և այն ամէն անձինք, որոնք այդ նպատակով դումարներ ժողովեցին։ Ամէն կողմից ժողովում են փոքր յօդուտ սպանված մշակների որբացած ընտանիքների. դա շատ մխիթարական երևոյթ է։ Բայց զարմանալի է որ բոյի մեղանից ստացած յիսուն ռուբլուց, մեռած մշակների աղգականները դեռ ոչ դրից ոչինչ փող ստացած չեն։

—

Հետաքրքիր է իմանալ ինչ եղաւ հայ քահանաների ժողովարարութիւնը յօդուտ սպանված մշակների ընտանիքների։

—

Մեզ պատմում են որ Ս. Գէորգ եկեղեցու հայ քահանաները այժմ դրանով են արդարացնում իրանց մերժումը մեռած մշակներին թաղելու, որ հանգուցեալներից մի քանիս հայեր չէին, այլ մշեցի քրդեր էին։ Շատ լաւ. ասենք թէ մի քանիսները քրդեր էին, ինչի մնացածներին, որոնք հայ քրիստոնեայ էին, չը թաղեցին։ Բացի սրանից այդ բանն էլ ստոյգ յայտնվեցաւ, որովհետև մեռածների աղգականները բերեցին մետրիկական վկայականներ, որոնցից երևում է թէ բոլոր եօթ մշակներն էլ քրիստոնեայ էին։ Բայց եթէ ճշմարիտ յայտնվեր էլ որ աղօրմելի մեռածներից մինը կամ միւսը հայախօս քիւրդ է եղել, որոնք հայաստանցի մշակների մէջ ոչինչով չեն զանազանվում իրանց հայ բանւոր ընկերներից և մինչև անդամ իրանք իրանց հայ են ասում, մի թէ քահանաների, քրիստոնէական եկեղեցու ներկայացուցիչների պարտաւորութիւնը չէր և սրանց թաղել քրիստոնէական կարգով։ Ինչով պէտք է զանազանվի քրիստոնէութիւնը մի այլ կրօնից, եթէ ոչ իր գթութեամբ, իր մարդասիրութեամբ։ Եթէ մենք գութ ու մարդասիրութիւն չունենանք, այլ կը թողնենք անթաղ խեղճ բանւորի դիակը, դուրս կը շպրտենք նրան եկեղեցուց ինչպէս մի շան լէշ, միայն այն պատճառով որ նա քրիստոնեայ չէ,—մենք արժանի չենք լինի քրիստոնեայ կոչվելու։ Երևակայեցէք ձեզ որ մի եապոնացի, մի չինացի, մի կռապաշտ վախճանվի Գերմանիայում. ինչպէս էք կարծում, գերմանացի բողոքական քահանան չի թաղի նրա դիակը, որովհետև նա քրիստոնեայ չէ։ Ոչ, ընդհակառակն, նա որպէս բուն քրիստոնեայ քահանայ, տեսնելով որ մարդկային էակը հեռու իր հայրենիքից աւանդել զունտ գնանք, հրեշտակապետը ուղղակի տարել է երկրագնտին արևմտեան կողմը Բրիտանական կղզիների վրա։ Աստուած տեսնելով անթիւ, անհամար երկաթուղիների գծերը, հարթուած լեռները, կամուրջները, տունէլները, ասել է «դու ինձ սիրալ տեղ բերիր, ես այսպէս տեղ չեմ ստեղծել։» Յետոյ հրեշտակապետը կարգաւ տարել է Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, վերջապէս ամբողջ Եւրոպան ցոյց տալուց յետոյ, Ամերիկա է տարել։ Աստուած զայրանալով, ասել է, «ուր ես ինձ տանում, ես երկրագունտ ուզում եմ գնալ, երկրագունտ, հասկանում ես, որտեղ Ադամն ու Եւան եմ ստեղծել։» Այն ժամանակ հրեշտակապետն ճարը հատնելով տանում է Աստուծուն չիտակ Ցաճկաստան։ Երբ Աստուած տեսնում է Թրքաստանը «Հա! ասում է, անտասիկ այժմ յիշում եմ ստեղծած աշխարհս. ինչպէս ստեղծել եմ, այնպէս էլ մնացել է։»

* * *

Մի Ֆրանսիացի անգղիերէն սովրելու, մանաւանդ անգղիացու նման արտասանելու չափազանց փափաք ունենալով, նոյն աղգից մի դասատու է ճարել և սկսել է սովորել։ Դասատուն պատուիրել է աշակերտին որ լաւ կանէ, եթէ անգղիացի բարեկամներ գտնէ և նոցա հետ խօսելու վարժուի։ Բայց անգղիացի բարեկամ գտնելը դիւրին բան չէ, նախ և առաջ անգղիացու մը միայն մի չոր բարեւին արժանանալու համար պէտք է մի մարդ 10 տարվայ ծանօթ լինի։ Խեղճ

մայի մէջ ասել են եպիսկոպոսին թէ, իւրաքանչիւր նախատինքը 15 օր բանտարկութիւն կարժէ, դա քու գիտնալիք բանդ է, որքան ասես, այնքան կը պակաս յարդի վրայ։

* * *

Եւրոպայում 13 թուականը անբախտ և աղէտաւոր թիւ է համարուած։ Այս անտեղի մտապաշտութեան կարծիքը ջնջելու նպատակաւ Նիւ-Եօրքում մի ընկերութիւն է կազմվել Երկաթգծաների կլուբ անուամբ։ Ընկերութեան անդամները լինելու են 169 հոգի, այսինքն 13 անդամ 13։ Կանոնագրութիւնը պիտի ունենայ 13 յօդուած, տարեկան տուրքն է 13 դոլար, ընկերութեան ժողովները պիտի դումարուին ամէն ամսու 13-ին, 13-ական անդամ նիստ պիտի ունենան, ատենաբանութիւնները 13-ական խօսք պիտի պարունակեն և իւրաքանչիւր խօսքը 13 բառ։

* * *

Ինչպէս թագաւորները երբեմն ճանապարհորդում են իրանց իշխանութեան ներքև գտնուած երկիրները այցելելու համար, նոյնպէս էլ Աստուած մի օր կամեցել է իր ստեղծած աշխարհները այցելել։ Գաբրիէլ հրեշտակապետին հրամայել է որ ղինքը տանի ման ածել տայ մեծ ու փոքր մոլորակներում։ Հրեշտակապետը Աստուծու առաջնորդելով և արեգակից սկսելով հաստատութեան բոլոր մարմինները մի առ մի ցոյց է տուել։ Յետոյ Աստուած ասել է թէ երկրագունտ գնանք, հրեշտակապետը ուղղակի տարել է երկրագնտին արևմտեան կողմը Բրիտանական կղզիների վրա։ Աստուած տեսնելով անթիւ, անհամար երկաթուղիների գծերը, հարթուած լեռները, կամուրջները, տունէլները, ասել է «դու ինձ սիրալ տեղ բերիր, ես այսպէս տեղ չեմ ստեղծել։» Յետոյ հրեշտակապետը կարգաւ տարել է Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, վերջապէս ամբողջ Եւրոպան ցոյց տալուց յետոյ, Ամերիկա է տարել։ Աստուած զայրանալով, ասել է, «ուր ես ինձ տանում, ես երկրագունտ ուզում եմ գնալ, երկրագունտ, հասկանում ես, որտեղ Ադամն ու Եւան եմ ստեղծել։» Այն ժամանակ հրեշտակապետն ճարը հատնելով տանում է Աստուծուն չիտակ Ցաճկաստան։ Երբ Աստուած տեսնում է Թրքաստանը «Հա! ասում է, անտասիկ այժմ յիշում եմ ստեղծած աշխարհս. ինչպէս ստեղծել եմ, այնպէս էլ մնացել է։»

* * *

Մի Ֆրանսիացի անգղիերէն սովրելու, մանաւանդ անգղիացու նման արտասանելու չափազանց փափաք ունենալով, նոյն աղգից մի դասատու է ճարել և սկսել է սովորել։ Դասատուն պատուիրել է աշակերտին որ լաւ կանէ, եթէ անգղիացի բարեկամներ գտնէ և նոցա հետ խօսելու վարժուի։ Բայց անգղիացի բարեկամ գտնելը դիւրին բան չէ, նախ և առաջ անգղիացու մը միայն մի չոր բարեւին արժանանալու համար պէտք է մի մարդ 10 տարվայ ծանօթ լինի։ Խեղճ

## ՖԵԼԻԵՏՕՆ

Գարֆիլդի սպանիչ Գիտօն մի քանի ամիս էլ ժամանակ ունի ապրելու, բայց հարուստ պիտի մեռնի, սա քիչ միխիթարութիւն չէ։ Իր ձեռքը գրուած երկտող գրութիւնները մեծ խնդրանք ծախվում են հրապարակների վրա։ Գիտօն, բանտի երկու սենեակները առևտրական մագազիններ է փոխադրել, բանտին դրանը վրա էլ հեռաւոր յայտարարութիւնն է կպցրել։

«Այս օրվանից սկսեալ իմ ձեռագիր ստորագրութեամբս գրուած թղթերը ծախում եմ գումինը $2^1/_2$ դոլար կամ հատը 50 սանթիմով, գինը մի և նոյնը լինելու պայմանաւ կաւելացնեմ միանգամայն իւրաքանչիւր ինքնագրիս ներքևը Աստուածաշնչից մի մի տուն։ Լուսանկարս մեծ չափով, որ ներքևը ստորագրութիւնս կրում է, հատը 1 դոլար կարժէ կամ գումինը 9 դոլար. շուտ արէք պիտի կախեն գիս, ժամանակ չը կայ։»

* * *

Բինկ թատրոնի հրդեհին պատասխանատու և յանցաւոր կարծուածներին դատաստանը վերջացաւ։ Աշխարհիս չորս կողմերը ամէն օր հեռագիրներ խրեցին վեց ամսից ի վեր տեղի ունեցած դատաստանական մանրամասնութիւնները հաղորդելով։ Վկաներ, ականատեսներ, ապացոյցներ ներկայացան հարցափորձեր, քննութիւններ զննութիւններ եղան, վերջապէս բան չը մնաց որ չանէին, համարեա ոչինչ դուրս չեկաւ, միայն թատրոնի դիրեկտորը 4 ամիս, մաշինիստը 8 ամիս բանտարկութեան դատապարտուեցաւ, քաղաքագլուխն էլ անպարտ դատուեցաւ, սրան էլ գնա բանդ ասացին և դատաստանն էլ վերջացրին։ Թատրոնի աւերակին տեղը Աստրիոյ կայսրը մի մատուռ և մի որբանոց չինել պիտի տայ։ Այսուհետև Բինկ թատրոնի խօսքը լսուելու չէ, յաւիտեան ջնջուեցաւ։

* * *

Ֆրանսիայում Բոնդվօ քաղաքին ժողովրդապետը եկեղեցու մէջ քարոզ տուած ժամանակը, «Օրհնեալ ժողովուրդ, ասել է, Ֆրանսիայում բարոյական և կրօնք չը մնաց, որովհետև երկիրը կառավարողները ցածահոգի, անամօթ, լիրը սրիկաներ են, այո, ասացի, և կրկնում եմ, մեր Ֆրանսիան ստահակների ձեռքին է մատնվել։» Այս քարոզից օրհնեալ ժողովուրդը բնականաբար չէ ախորժել, յանդուգն ժողովրդապետին ամպիոնից վար են իջեցրել և չիտակ պատժական ատեանումն են տարել, որտեղ՝ դատաւորը առանց ուշադրութիւն դարձնելու կղերական վերարկուին, 15 օր բանտարկութեան դատապարտել է։ Բանտը մտած ժամանակը հոգևորականը սկսել է հասարակաստութեան դէմ հայհոյել, բանտապետը խմաց տուել է դատաւորին, կրկին 15 օր բանտարկութիւնը երկարել են, դարձեալ թշնամանել է, վերստին պատիժը աւելացրել են։ Վերջապէս

է իր հոգին, իր քրիստոնէական սուրբ պարտաւորութիւնը կը համարի, առանց նայելու, թէ մեռածը ինչ կրօնին էր պատկանում, նրա դիակը քրիստոնէական կարգով թաղելու: Բայց ամենազզուելին այն է որ մեր քահանաները դիտմամբ սուտ լուրեր էին տարածում թէ մեռածները քըրդեր էին, քանի որ խեղճերը բոլորն էլ հայեր էին: Ուրիշ կողմից, լսում ենք, որ Ս. Գէորգ եկեղեցու երեցփոխանը այժմ փող է պահանջում մեռածների ազգականներից եօթ նահատակների դագաղների վարձի համար: Չենք հասկանում, ինչի մէջն է երևում թէ մենք քրիստոնեայ ենք:

—

Երէկ յանձնեցինք մեռած մշակների ազգականներին այն 50 ռուբլի, որ նուիրել է Վանքի մայրեկեղեցու առաջ քահանայ Յովհաննէս Սարգսեանց:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԳԵՐՄԱՆԻԱ

—

Ամենքը առաջուց գուշակում էին, գրում է „Голосъ“ լրագրի թղթակիցը, որ ծխախոտի մենավաճառութեան հարցի քննութեան ժամանակ գերմանական կառավարութիւնը կը յաղթվի, բայց ոչ ոք չէր սպասում, որ այդ յաղթութիւնը այնպիսի վճռական բնաւորութիւն կունենայ, ինչպէս այդ պատահեց գերմանական պարլամենտի մասնաժողովի մէջ: Մասնաժողովի 28 անդամներից միայն երեք անդամ քուէարկեցին յօգուտ կառավարչական առաջարկութեան: Ծխախոտի մենավաճառութեան օրինագիծը չափազանց արագ էր քննվում և իւրաքանչիւր առանձին յօդուածի քուէարկութեան ժամանակ միշտ յայտնվում էր նոյն չնչին փոքրամասնութիւնը յօգուտ նախագծի:

Զը նայելով, որ իշխան Բիսմարկ ծանր հիւանդ է, նա անդադար աշխատում: Նա գործերով զբաղվում է մինչև անդամ անկողնի մէջ: Նրանից ստացված բաղմաթիւ հեռագիրներից երևում է, որ Բիսմարկ արթնութեամբ հետևում է գործերի դրութեանը: Պարլամենտական վիճաբանութիւնների ընթացքը ի հարկէ չէ նպաստում նրա առողջութեանը:

Վերջին շաբաթների ընթացքում հասարակական կարծիքը և մամուլը զբաղված են պարլամենտական մասնաժողովների պարապմունքներով: Այդ մասնաժողովները բացի ծխախոտի մենավաճառութեան օրինագիծը, քննում են նոյնպէս և բանուորներին հիւանդութիւնների և զանազան դժբաղդութիւնների դէմ ապահովելու նախագիծը: Վերջին նախագիծը դեռ կարող է ընդունվել, եթէ կառավարութիւնը կը հրաժարվի իր առաջարկութիւնից, որ կայսերական դանձարանը մասնակցի ապահովական վճարների հատուցմանը:

Ընդդիմադրական կուսակցութիւնը այդ մասնակցութիւնը մի անիրաւացի օգնութիւն է համարում հարուստ արդիւնաբերողների և գործարանատէրերի համար, որոնք առանց պետական գանձարանի օգնութեան էլ կատարելապէս կարող են ապահովել իրանց բանուորներին հիւանդութիւնների և դժբաղդութիւնների դէմ: Կառավարութիւնը այդ հարցի վերաբերութեամբ արդէն մի զիջումն արաւ, յայտնելով, թէ ինքը կը հրաժարվի սուբսիդիա տալուց, եթէ արդիւնաբերողները և գործարանատէրերը իրանք կը կարողանան վճարել: Այս հանգամանքը ի նկատի առնելով, կարելի է ենթադրել, որ այդ հարցի վերաբերութեամբ համաձայնութիւն կը կայացվի:

Միւս կողմից կենտրոնական կուսակցութեան առաջնորդ Վինդհօրստ առաջարկում է, որ այդ հարցի քննութեան համար պարլամենտական մասնաժողովին ժամանակ տրվի մինչև աշունը: Այդպիսով պարլամենտական արձակուրդների ժամանակ մասնաժողովը միջոց կունենայ հարցը բազմակողմանի քննութեան ենթարկել: Բացի կենտրոնական կուսակցութիւնը, միւսները կասկածով են վերաբերվում Վինդհօրստի առաջարկութեանը: Ցայտնի է, որ պրուսական սէյմի ընդունած եկեղեցական օրէնքները կը հրատարակվեն միայն աշունքին: Այդպիսով Վինդհօրստ կամենում է ժամանակ վաստակել և տեսնել, արդեօք կը գործադրվեն եկեղեցական նոր օրէնքները և յետ կը կանչվեն դատապարտված եպիսկոպոսները իրանց թեմերը կառավարելու համար: Այդ հարցը պէտք է վճռված լինի մինչև աշունը և կառավարութեան վճռի համեմատ կենտրոնական կուսակցութիւնը կը վերաբերվի բանուորներին ապահովելու մասին կառավարչական նախագծին:

—

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՑԻՑ

—

Վան, ապրիլ 20/2 մայիս

Այս տարի ձմեռը տարօրինակ և շատ երկարատև եղաւ: Դեռ մի քանի օր յառաջ ամեն առաւօտ ձիւն կը տեղար և մինչ երեկոյ կը հալէր: Մի քանի օր յաջորդաբար այդպէս անցաւ: Շատ ձիւն գալը ի հարկէ օգտակար կը լինի առաջիկայ հունձքին համար. բայց մի քանի կողմեր, մասնաւորապէս Վանի ծովի հարաւային կողմը, գաւառ գաւառը, ոչխարներն և տաւարներն սկսած են սատկել որովհետև ձմրան համար պահուած խոտը և դարմանը սպառուած են և արօտատեղերն ալ դեռ չեն բացուած որ տանեն արածեն: Իսկ ծովին արևելեան և հիւսիսային կողմի գաւառները աղատ են առ այժմ կենդանիներու կոտորածէն և արմտիքն ալ լաւ հունձ կը խոստանան, եթէ մինչև հունձի ժամանակ ուրիշ վնասակար դէպքեր չը պատահին: Այժմ ցորենի չափը (գրեթէ $2^1/_2$ պուդ) 3 ռուբլի է, որ շատ թանգ չէ:

Մօտաւուտ պատերազմի մը կասկածները սկսած են շատնալ այստեղ: Վանի արևելեան և հիւսիսային կողմերն բնակող երկու քուրդ ցեղեր, Շիկակցիներ և Զիլանցիներ, իրարու դէմ թշնամութեամբ ոգևորուած, պատրաստուեր են զիրար կոտորել: Թիւրք կառավարութիւնը այդ թշնամութիւնները արդիւնաւոր և Շիկակցիներու գլխաւորը Ալի-Ճապան՝ որ երբեմն այս կողմին Պարսկաստան և երբեմն ալ Պարսկաստանէն այս կողմ կը փախչուի, բռնելու պատրուակով բաւական զօրք զրկեց պարսկական սահմանագլուխն: Բայց ինչպէս ըսինք, այդ պատրուակ մը, կեղծ պատճառ մը կը կարծուի ընդհանրապէս և կը կասկածուի որ Պարսից հետ պատերազմ մը ծագի, որովհետև պարսիկն ալ իւր սահմանագլուխը զօրքեր լեցուել սկսեր է այժմ: Լաւ կը պատի նաև թէ Շէյխ-Իբրահիմն ալ պիտի վերադառնայ Կ. Պոլսէն: Այս տեսակ լուրերու ստուգութեանը չենք կարող երաշխաւորել. բայց սա ճշմարիտ է որ թիւրքերը ընդհանուր խառնակութեան երկիւղի մէջ են. հայերն ալ՝ սպասող դիրքի մէջ:

Վանէն բաժնուելով կազմուած Հէքեարի քրդական վիլայէթին նահանգապետ Հիլմի-փաշան գնացած է արդէն իւր պաշտօնատեղ: Սա ծերունի, կրօնամոլ և հնամոլ մի մարդ է որ իւր խրատութիւններով հաւանօրէն իւր դէմ պիտի գրգռէ Տիարբի լեռնական ասորիներն որք Մարշմանի իրաւասութեան տակ են: Տուրքի պատճառով արդէն անհամաձայնութիւն ծագած է այդ խեղճ ժողովրդեան և թիւրքաց կառավարութեան մէջ: Թիւրք հարկահան պաշտօնատարները իրենց հաւաքած, օրինակի համար, 5—6,000 ղրուշ տուրքի փոխարէն 1,000 ղրուշի ստացագիր կը տան եղեր և որովհետև այդ խեղճ ասորիներն ալ թիւրքերէն կարդալ չը գիտեն, խաբուելով ընդուներ են և այժմ կը տեսնեն որ, այնչափ մեծագումար տուրքեր վճարելէ յետոյ, տակաւին անագին պարտք մ'ունին եղեր զոր նորընտիր նահանգապետ Հիլմի-փաշան խստութեամբ կը պահանջէ: Այս խրատութիւնը ասորւոց կողմէն ապատամբութեան մը կասկած տուած էր. բայց Վանի նահանգապետ Հասան-փաշան, որ Հիլմիի հետ բաղդատելով բաւական խոհեմ և խորամանկ մի անձ է, խորհուրդ տուած է Հիլմի-փաշային որ առ այժմ մեղմացնէ իւր խստութիւններ:

Զեր ընթերցողներուն ծանօթ է Բաշկալէի առաջնորդ Յովհաննէս վարդապետ Քաջունին որ անձնապաշտպանութեան համար մի քուրդ սպանած լինելուն և իբր թէ Պարսկաստանի քուրդ աղաներուն հետ յարաբերութիւն կապած լինելու պատճառով Բ. Դռնէն Կ. Պոլիս կանչուած և հազիւ հազ սրբազան Ներսէս պատրիարքի և Խրիմեան Հայրիկի միջոցով իւր անմեղութիւն երևան ելած և ազատուած էր: Հիլմի-փաշան երբ կերթայ Հէքեարի (Բաշկալան Վանէն բաժնուելով Հէքեարի նահանգին արուած է), Բաշկալայի մի քանի հայ աղաներն, որք վարդապետին հակառակորդներն են և Վանի Գարեգինեան կուսակցութեան հետ կապ ունին, չեն ամաչեր կուսակցութեան վատ ոգով ցած զրպարտութիւններ անել և Հիլմի-փաշային կասեն թէ Յովհաննէս վարդապետ Բաշկալայի վանքին մէջ զէնքեր և ռազմամթերք պահած է և թէ այս ինչ օր ապըստամբական խորհուրդ պէտք է անեն վանքին մէջ: Նոյն օր մի յիսնապետ զօրքերով կը գայ կը խուզարկէ վանքը և կը տեսնեն որ խօսուածներն ցած զրպարտութիւններ են եղեր:

Լրագիրներու համար Կամսարական բէկի և փօստի վարչութեան մէջ ծագած վէճը հանդարտեցաւ: Այժմ սկսած են նորին վսեմութեան լրագիրներն ժամանակին յանձնել իւր ձեռք: Այս վէճէն օգտուեցաւ նաև այս տեղի հայ ժողովուրդը, որովհետև Կամսարական բէգ համոզելով նահանգապետ փաշային թէ լրագրի ընթերցանութիւնը որչափ հարկաւոր է ժողովուրդին համար և թէ լոկ զուարճութեան համար չեն կարդար զայն, այլ վաճառական ժողովուրդը շուտ կամ ուշ լուրեր ստանալէն մեծ շահեր կամ մեծ վնասներ կրնայ ունենալ, այժմ որոշուած է որ Կ. Պոլսէն եկած հայերէն և ֆրանսերէն լրագիրներն 12 ժամէն յետոյ յանձնուին իրենց տէրերուն մինչև յառաջ մի շաբաթ կը պահուէին տեղական ցենզուրային մօտ: Եղուիտները որոշած են մի բարձրագոյն վարժարան բանալ այստեղ առաջիկայ օգոստոսին և ասոր համար պատրաստութիւններ կը տեսնեն արդէն: Իւրեանց գլխաւորը եղուիտ ուսուցիչների մի խումբ առած իւր հետ Մուսուլէն պիտի գայ այստեղ այդ ժամանակ: Իսկ մեր ազգային դպրոցներն նիւթական և այլ տեսակ դժուարութիւններու, մասնաւորապէս հակառակասէր և անհասկացող թաղական խորհուրդներու պատճառով, դեռ բարեկարգ վիճակ ունեցած չեն: Կենտրոնական վարժարանը որ այստեղի բարձրագոյն վարժարանն է և որ կրնայ ապագային մէջ մեծ օգուտներ արտադրել, մի մըտաւոր յեղափոխութիւն յառաջ բերելով Վասպուրականի նոր սերունդին մէջ, ցաւալի է որ օտար քաղաքներու հայերէ դեռ այնչափ քաջալերդ դուած չէ որ աւելի հասատ և զօրաւոր քայլերով դիմէ դէպի իւր նպատակը: Նա կը գործէ այժմ այնչափ որչափ կարելի է, տեղական տկար ոյժերով: Իսկ ամեն բարի բանի հակառակորդ,

---

ֆրանսիացին բարեկամ դանելու դժուարութիւնից յուսահատած, սկսում է սրճարաններում, ճաշարաններում մեն գալով անգղիացի փնտռել: Շատերի մօտը գնացել նստել, բարև է տուել, ըստ անգղիական սովորութեան ընաւ ուշադրութիւն չեն դարձրել: Ինչ կուզէ թող լինի, պէտք է ճարեմ ասելով, այս անդամ ֆրանսիացին գնացել մի ճաշ ուտող անգղիացու աջ կողմը նստել է, անգղիերէն լեզուաւ բարև է տուել, նա չէ պատասխանել.—կարծեմ բօզրիֆ է ուտում, լմնն է արդեօք, ինչ կասէք ես էլ ֆուտեմ,—անգղիացին երեսին անդամ մտիկ չէ տուել: Ֆրանսիացին, անպատճառ անգղիացին խօսեցնել ուզելով, ինքն էլ իրան համար պատուիրած բօզրիֆը դանակով կտրած ժամանակը, դիտմամբ անգղիացուն թևին է խփել. անգղիացին ձայն չէ հանել, երկրորդ անդամ աւելի ուժով խփել է: Անգղիացին երկրորդ հարուածից բարկանալով, «պարոն! որտեղ էք կրթվել» ասել է: Ֆրանսիացին արդէն բայերի դասը սկսած ըլլալով, «կրթվել» բայը լսածին պէս, իսկոյն սկսել է խոնարհել—կըրթվել եմ, կրթվել ես, կրթվել է, կրթվել ենք, կըրթվել էք...—անգղիացին տաքանալով—պարոն! ինչ յանդգնութիւն է, ծաղրում էք զիս—ֆրասիացին—ծաղրում եմ, ծաղրում ես, ծաղրում է, ծաղրում ենք...—Անգղիացի կատաղած, հիմի քեզ կը սպանեմ—ֆրանսիացին—կը սպանեմ, կը սպանես, կը սպանէ,—անգղիացին այս անդամ կրակ կտրած ոտքի կանգնելով,—լիրբ զքեզ! մենամարտ կը հրաւիրեմ—ֆրանսիացին, այսքան առատ անգղիերէն բայեր կեանքումը չը լսած, շարունակ խոնարհում է—վերջապէս անգղիացին յարձակելով ֆրանսիացու վրայ և կոկորդից յափշտակում է, իսկ ֆրանսիացին խեղճուկ ձայնով կրկին բայ է խոնարհում: Ճաշարանում գտնուող բոլոր մարդիկը վրայ հասնելով ջոկում են երկու մարտնչողներին, և ֆրանսիացին բացատրում է էութիւնը և հանդարտում են, բայց անգղիացին ասում է ֆրանսիացուն, «ներում եմ քեզ, որովհետև իմ լեզուս սովորելու փափաքը քեզ այս կէտին հասցրեց, միւսանդամ ուրիշ միջոց գտիր անգղիերէն բայ խոնարհելու»:

* *

—Տէր ատենապետիր! ինչով կը պարապիս կոր:

—Եղբայր, պատրիարքի հրաժարականը ընդունել տալու համար նորին սրբազնութեան երեսփոխանական ժողովի կողմանէ մատուցուելիք ուղերձի մը շարադրութեան փափուկ պաշտօնը ինձ յանձնեց մասնաժողովը, ատիկա կը չինեմ կոր:

—Ցանուն ազգային սահմանադրութեան կաղաչեմ, Տէր! աշխատէ որ ազգու և դիւրիմաց ըլլայ:

—Այդ կողմանէ ապահով եղիր:

—Եթէ կարելի է, անդամ մը կարդայ տեսնեմ:

—Տակաւին վերջացուցած չեմ, բայց յառաջբանը կարդամ, եթէ ճարտասանութեան և տրամաբանութեան տեղեակ ես, վերջաբանը կարող ես զուշակել, անաւասիկ պատճէնը. «Ամենապատիւ սրբազան հայր!

«Թերևս ոչ օգտակար լինչ և կամ վնասակար համարեցի ոք փոյթ անձին առնուլ և ուղղել կարևոր քննութեամբ գլխաւորեալն յաչաց ձերդ սրբազնութեան առ յընդլայնելն ըղձից, փափաքանաց, տենչանաց, բաղձանաց, (թողումք մերոց պարտապանաց), հայրենասիրական զգացմանց ազգայնոց մերոց, վասն վերաքննութեան ազգային սահմանադրութեան հայոց և վասն վերհասատութեան նոցունց իրաւանց և վաւերացուցանել ընդ նմա զանհրաժեշտ հրաժարականդ ձերդ սրբազնութեան ի փրկութիւն ազգիս և ի թողութիւն մեղաց, մերոյ և այլն և այլն»:

Ահա ասանկ կը շարունակեմ կոր, ասկէց վերջանը կարող էք գուշակել...:

—Այո... վերջաբանը.... Այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն:

—

«Պոլսեցի հայերուն թուքը», նամանեցուցեալ բանաստեղծութեան «Գամառ Քաթիպայի».

—

Դու խրոխտապանծ երեսփոխան ես,
Էֆէնդիութեան փառք պարծանք ունես,
Բայց թէ փառքէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ փառքիդ ալ վրան:

—

Լաւ ճարտասան ես և տրամաբան,
Կը ճառաբանես հարցըն Հայկական,
Բայց թէ ճառէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ ճառիդ ալ վրան:

—

Մեծամեծների առջև ցածացար
Վերջը՝ մեծ պատուով ինքդ ալ բարձրացար
Բայց թէ պատուէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ պատուիդ ալ վրան:

—

Դու բաղմահմուտ բժշկապետ ես,
Աղքու դեղերով ախտեր կը բուժես,
Բայց թէ դեղէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ դեղիդ ալ վրան:

—

Շքեղ պալատներ շինքեր կառուցիր,
Խելքովդ ամենքը դու զարմացուցիր,
Բայց թէ խելքէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ խելքիդ ալ վրան:

—

Դիւանագիտաց քաջ ծանօթացար
Սրամիտ գլխովդ դու դեսպան դարձար
Բայց թէ գլխէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ գլխիդ ալ վրան:

—

Մարսիլիա, Լիոն, Լօնդօն, Մանչեսթեր,
Ունիս բաղմաղէղ ապրանաց մրթեր,
Քանի որ օգուտ չունի Հայաստան,
Թըքել ենք բոլոր ապրանքիդ վրան:

Կրռ.

զրպարտիչ և չինութենէ չասորժելով միշտ քանդել սիրող նախանձոտ և ցածոգի հայեր չեն պակսիր որք զանազան տեսակ զրպարտութիւններով կաշխատին միշտ գործողները վհատեցուցանել, զանոնք դժուարութիւններու և արգելքներու տակ ճնշել և յուսահատցուցանել և այդ կերպով մեր ազգի թշնամիներու հացին իւղ քսել, նոցա լաւ գործիքներ դառնալ, գիտութեամբ թէ անգիտութեամբ:

Կառավարութեան վերաքննիչ ժողովին նախագահ և արդարութեան քննիչի (աղլիյէ մուֆէթթիշի) տեղակալ Բաուֆ բէկ՝ կառավարութեան կողմէն մի քանի անգամ եկաւ այցելեց կենտրոնական վարժարանը, դասախօսութեան մեթոդները և աշակերտներու ուսումնական վիճակը քննեց և շատ գոհ լինելով աշակերտներուն քաջալերական խօսքեր խօսեցաւ: Վարժարանի հաշիւներն ալ աչքէ անցուց և տեսնելով որ վարժարանը ուր 25-էն աւելի աղքատ աշակերտներ ընդունուած են թոշակ վճարելու անկարող, նիւթական օգնութեանց կը կարօտի աւելի կանոնաւոր և հաստատ կերպով յառաջ երթալու համար, խոստացաւ նահանգապետ փաշային հրաման առնել որ յօգուտ կենտրոնական վարժարանի թատերական ներկայացումներ և ձիարշաւի հանդէսներ լինին: Բաուֆ բէկ Եւրոպա ուսում առած մի երիտասարդ է և Պետերբուրգի օսմանեան դեսպանատան մէջ ալ ծառայած է: Իւր խորհուրդով կենտրոնական վարժարանի յառաջադէմ աշակերտներէն պ. Մկրտիչ Թէրզէմէլեան, Վասպուրական նահանգի քարտէզը գծեց, մինչև հիմա հրատարակուածներէն աւելի ճիշդ և մանրամաս կերպով, որուն վրայ առանձին և մանրամաս կերպով նշանակուած էին նաև Վան քաղաքի և Այգեստանի պլանները: Մի ուրիշ աշակերտ ալ, պ. Գալուստ Ասլանեան որ գծագրութեան և բնական գիտութեանց ճիւղերու մէջ զարմանալի ճիրքերով օժտուած է բնութենէն, գծագրեց մի գեղեցիկ նկար որ կը ներկայացնէ մի գիւղացի աղքատ տղայ որ չունենալով ուրիշ բան նուիրելու համար, լեռներէն և դաշտերէն ժողոված ծաղիկներէն մի փունջ կազմած նուէր կը մատուցանէ: Այս երկու աշակերտներ, Բաուֆ բէկի առաջնորդութեամբ և վարժարանին տեսուչ պ. Փորթուգալեանի հետ ներկայացան նահանգապետ փաշային, իրենց աշխատութիւնները ընծայելու համար: Փաշան սիրով ընդունեց, քաջալերական խօսքեր խօսեցաւ տեսչին և աշակերտներուն և խոստացաւ որ մօտիկ օրեր անձամբ այցելութիւն անէ վարժարանին և բոլոր աշակերտներն ալ խրախուսէ: Խօսքով քաջալերներ շատ կը լինին ամէն կողմէ. բայց գործով տրուած քաջալերները կը յայտնուին կենտրոնական վարժարանի տարեկան մանրամաս տեղեկագրին մէջ որ առաջիկայ նոյեմբերին կը հրատարակուի:

Այս տեղի Սանդխտեան ընկերութիւնը որ տասը տարիներէ աւելի է որ կազմուած է և իւր նպատակը լինելով իրական սեռի դաստիարակութիւնը, բացած է Վանի օրիորդական միակ վարժարանը, Սանդխտեան անուն, այսչափ ժամանակէ հետէ մի մասնաւոր շէնք չէր կրցած ունենալ վարժարանի համար, այլ վարձով մի տուն կը բռնէր: Համակրութեան արժանի այս ընկերութիւնը քաջալերելու համար, պ. Մկրտիչ Սանասարեանց, իւր ծախքով մի վարժարան կառուցանել կը տայ այժմ Վանի մէջ: Շէնութիւնն այս օրեր կը սկսի. ատաղձներն պատրաստուած են արդէն. գործին դլուխ կանգնած է Խրիմեան Հայրիկ: Պ. Սանասարեանցի յանձնարարութեան համեմատ, վարժարանը միայրակ պիտի լինի առ այժմ, գեղեցիկ մի քիչ բարձր և ընդարձակ դիրքով: Պ. Սանասարեանց յատկապէս յանձնարարած է որ հաստատուն շինեն շէնքը և խոստացած է ապագային մէջ երկրորդ հարկ մ'ալ բարձրացունել նորա վրայ:

Թէև այստեղ շատ ընկերութիւններ կային կազմուած զրկեալ համանման նպատակներով, բայց հաստատ հիմք չունենալով, մեծ մասն ցրուած են այժմ: Սոցա մէջ նշանակութեան արժանի ընկերութիւններն որք մինչև այժմ կան, բացի Սանդիտեանէն, հետեւեալներն են: Հայրենասէր ընկերութիւն՝ որ Հայկազեան անուն ամենօրեայ մի նախակրթարան (երկու սեռի յատկացած), մի կիրակօրեայ վարժարան և մի ընթերցարան ունի: Լսարան ալ ունէր հրապարակային դասախօսութեանց համար. բայց թիւրք կառավարութիւնը փակեց զայն վերջերս: Այս ընկերութիւն վեց տարիներէ հետէ ծանր բայց հաստատուն քայլերով յառաջ կերթայ: Կ. Պոլսի թիւրանի ուսումնասիրաց ընկերութեան օժանդակ մասնաճիւղ՝ որ Վանի ծովին հարաւային արևմտեան կողմն խիզան գաւառի քրդախօս հայոց մէջ և այլ յարմար տեղեր հինգ նախակրթարան բացած է: Խնամատար ընկերութիւն՝ որ 20-էն աւելի որբ և անտերունչ աղքատ տղայներ մի որբանոցի մէջ հաւաքած, նոցա ուտեստ, հագուստ և ուսում կը տայ: Ափսոս որ Հայաստանի մէջ տկար այժերով յառաջ եկած այս տեսակ հաստատութիւնները իրենց տկար վիճակի մէջ են մնացած միշտ, օտար քաղաքներու հայերէ ալ օգնութիւն չը գտնելով:

Այստեղ սովորութիւն կայ որ Զատկին յաջորդ նոր կիրակիի օրը Աւաղնոց ասուած տեղն կը հաւաքուի մեծ բազմութիւն և ձիավարժներն այնտեղ ձիարշաւ և նիզակախաղ կանեն: Այդ մրցումի մասնակցողները մինչև այժմ բացառապէս թիւրքեր կը լինէին. բայց երկու տարի է որ հայերն ալ սկսած են թիւրքերու հետ խառն մրցումի մտնել: Նոր կիրակիէն երեք օր յետոյ, Աւետման տօնի օր, հայ երիտասարդները մի խումբ կազմած, առաջնորդութեամբ Կենտրոնական վարժարանի մարմնամարզի դասատու պ. Կարապետ Փիլիպոսեանցի, երկրորդ անգամ ալ ձիարշաւի հանդէս արին, Այգեստանի Ցայնկոյսներ թաղի կողմն մի յարմար տեղ: Այս վերջին ժամանակներ հայոց մէջ ալ սկսած է լաւ հեծելավարժութեան և ձիարշաւի փափաք մը որուն համար Վանի երիտասարդները շատ կը պարտին պ. Փիլիպոսեանցին: Որչափ երջանիկ կը լինէր Վան եթէ օտարաքաղաքացի ուսեալ ուրիշ երիտասարդներ ալ սորա օրինակին հետեւելով, զային օգտակար լինելու իրանց մայր-հայրենեաց:

Հրանտ

## ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս, 15 մայիսի

Ամենապատիւ Մկրտիչ սրբազան, Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ, երկու օր առաջ այնպէս կամեցաւ որ մեկնի Կ. Պոլսէն և մեկնեցաւ, առանց մեծ աղաղակութիւն վարչական ժողովին որ ինքզինքը դեռ հեղինակութիւն ունեցող մարմնոյ մը տեղ դրած էր: Ահա այդ անկարող բայց զոռոզ վարչութիւնը որ երկու հարուած հետզհետէ ստացաւ մէկ շաբաթուան մէջ: Նախ Նիկոմիդիոյ առաջնորդ Սահակիանոս վարդապետէն, որ հակառակ վարչութեան ազդարարութեանց՝ որ իւր պաշտօնատեղին մնայ դեռ, առաջ փառաջ Բօթիի շոգենաւը նստաւ և դնաց Էջմիածին եպիսկոպոսական աստիճան ստանալու:

Բայց Մկրտիչ Կաթողիկոսին այսպէս յանակնկալս մեկնիլն, առանց «Մնաք բարեաւ», առանց պատրիարքարանի հետ վերջնական համաձայնութիւն մը դոյացնելու, առանց անսալու վարչութեան ատենապետի հրաւէրին որ մնայ տակաւին, այս եղելութիւն յայտնապէս ցոյց տուաւ թէ որքան կրկնած ենք: Նախ որ Կաթողիկոսն ըմբոստ և խառնակիչ անձ մըն է, ազգային միութեան դէմ դաւադրող. հետեւարար պէտք է, իբր վնասակար մի անհատ, վնասելու անկարող դրութեան մէջ դնել զայն: Երկրորդ որ վարչութիւն ըսուած իշխանութիւնը, որ վեց ամիսէ 'ի վեր վայելելու նախանձելի երջանկութիւնն ունիմք՝ վերջին ծայր անհեռատես և հաղմարած անձերէ բաղկացեալ է, որ ոչ ազգին վստահութիւնն և համակրութիւնն կը վայելէ, ոչ ալ փոքր ինչ արժանիք ունի Բ. Դրան մօտ:

Երբ լսուեցաւ Կաթողիկոսին չորեքշաբթի օրը մեկնիլը, ամէն մարդ անտարակոյս զայրոյթ ըզգաց անոր պարսաւելի վարմունքին համար, բայց միանգամայն չատերն չի կրցան քմծիծաղին զսպել, աչքի առաջ բերելով մեր վարիչ էֆէնդիներուն գրիմասը: Այս է ահա առաջին, անմիջական արդիւնքն որ կը տեսնենք այն օրէն ի վեր երբ քանի մը վարչութեան կռուինչներ եկան ամբողջ ազգի մը հոգը վրանին առին, առանց այս պաշտօնին անհրաժեշտ եղած տարրական հանգամանքներն ունենալու, և այսպէս ամէն բան «քիթերնին բերանին դարձուցին» ինչպէս կրսէ պոլսեցին: Ահա այն խնդրոյն եզքը որու համար վարչութիւնը վեց ամիս ամբողջ զսպեց և որու ամենէն աւելի կարևորութիւն տալ կը ձևացնէր: Կրնանք երևակայել միւս խնդրոց ալ վիճակն այս պարագայէս:

Ներսէս պատրիարքին օրոմն այսպիսի խաղքութիւն մը կարելի չէր որ տեղի ունենար: Ներսէսը շուք ունէր, հեղինակութիւն ունէր, կանանձէր ամէն ոք անկէ: Մինչդեռ հիմայ, անոնք որ ինքզինքնին Ներսէսէն խելացի կը կարծեն, որ զայն մոռացնել տալ կը նկրտին, անոր ունեցած մեծ կարեորութիւնը փոքրացնել կաշխատին, ահաւասիկ այդ էֆէնդիներն որք յայտնապէս ցոյց տուին հիմայ իրենց չափն ու կշիռը: Եւ այս ակիզն է դեռ այն չարք մը ծիծաղներուն որ պիտի զրկեն մեզ, երբ հետզհետէ իմանանք անոնց վեցամսեայ գործունէութեան փառաւոր հետևութիւնները:

Մայիսի 10-ին երկուշաբթի օրը, Մկրտիչ Կաթողիկոս իր 13-ին մեկնելը կը ծանուցանէ վարչութեան: Վարչութիւնը կառարկէ անոր որ լաւ կընէ եթէ իր ուղեորութիւնը յետաձգէ և սպասէ չորեքշաբթի օրուան վարչական խորհուրդի տուած որոշումին: Նոյն օրը, չորեքշաբթի, վարչական խորհուրդն, որ վստահ է կերեպ իր կարծիքներն միշտ իբրև պատգամ ընդունուելուն՝ հանդիստ սրտով պատրիարքարան հաւաքուած ժամանակ, կիմանայ որ նոյն միջոցին Ամենապատիւ սրբազան Կաթողիկոսն Տանն Կիլիկիոյ իր կամ կարասիքը չղրկեսաը փոխադրելու վրայ է: Շուտով նամակ մը կուղարկէ, հրաւիրելով զայն մնալ տակաւին և ներկայանալ խորհրդին հետևեալ շաբաթ օրն: Նամակը չոգենաւին մէջ Կաթողիկոսի ձեռքը կը հասնի: Նա կը պատասխանէ թէ շատ ուշ է հասած այդ հրաւէրը և թէ չէ կարող այլ ևս մնալ, վասն զի իր ներկայութիւնը Կիլիկիոյ մէջ կարևոր տեսեր է:

Գործն այժմ այս վիճակին մէջն է: Ինչ հետեւանք պիտի ունենայ: Ոչինչ, քանի որ այս վարչութիւնը չէ կարող որ և է գործի որ և է եզրակացութիւն տալ: Բէրլէն անփոփոխ կը մնայ, Պատրիարքարանը ալ չի հրամայէր Կիլիկիոյ վիճակին և Սիսի Կաթողիկոսը անկախ է անոր իրաւասութենէն: Պէտք է սորագրութիւն բանանք վարչութեան այս առաջին յաղթանակին համար զայնի պակներ ընծայելու:

Վարչութիւնը հեռագրած է, կըսեն, Իզմիրի պատրիարքաց առաջնորդին որ վատ ընդունելութիւն ընէ Կաթողիկոսին երբ սա յիշեալ նաւահանգիստը հասնի: Հաւանական է որ Մելքիսեդեկ եպիսկոպոսը այս հրամանին վրայ աւելի փառաւոր ընէ իր ընդունելութիւնը:

Կիլիկիոյ Կաթողիկոսը թող նաւարկէ այժմ հանդիստ Արշիպելագոսի մէջ, և արդէն թող վարչութեան լուսամիտ և խորագէտ անդամները տեղեկագրեր իմբաղրեն, ճառեր արտասանեն, դիպլոմատիկական դարձուածքներով գրութիւններ շարադրեն, առանց ազգային երևսփոխանութեան խօսքն անգամ ընելու: Այդ տեսակ կարեւոր գործողութեանց համար նստած են անոնք այն տեղ:

Շատ ժամանակ էր որ հայերն այսպիսի գործունեայ, հեռատես և ազդու վարիչներու հանդիպած չէին:

Մ. Վ.

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Լոնդոնի «Daily Telegraph» լրագրում մայիսի 24-ից տպված են. հետեւեալ տեղեկութիւնները: «Մենք իմացանք, որ անգլիական բոլոր իշխանութիւնները ստացան սաստիկ սպառնալի նամակներ, որոնք վերաբերվում են այժմ Լոնդոնում ապրող շատ նշանաւոր պետական մարդկանց. վերջին երկու երեք օրերում պոլիցիան կրկնապատկեց իր հսկողութիւնը: Շատ հանգանալի պատճառներով մենք զգուշացնում ենք այն անձանց անունը հրատարակելուց, որոնց վտանգ է սպառնում, բայց այդ վտանգը այնու ամենայնիւ գոյութիւն ունի: Այժմ իւրաքանչիւր մինիստրի բնակարանը Լոնդոնում պոլիցիայի խիստ պաշտպանութեան տակ է և մինիստրներին մինչև պարլամենտ տանում են քաղաքական շտեր հագած կոնստեբլերը. այդ պատճառով չէ կարելի ասել, թէ անգլիական կառավարութիւնը զգուշութեան միջոցներ չէ գործ դնում:»

—Լրագիրներին հեռագրում են, որ անգլիական պատգամաւորների ժողովում Գլադստոնի արած յայտնութեան դէմ, որի մէջ նա կարծես պայմանական ձևով էր ընդունում սուլթանի բարձրագոյն իրաւունքները Եգիպտոսի վրա, կը բողոքի Բ. Դուռը:

—Հռոմից լրագիրներին հաղորդում են. Իտալիան հաստատապէս յոյս ունի, որ Աւստրիան եգիպտական հարցի մէջ չի թոյլ տայ, որ դիպչին Իտալիայի շահերին: Իտալիայի և Ֆրանսիայի մէջ եղած յարաբերութիւնները լարված են:

—Լոնդոնի լրագիրների խօսքերով, Միխայիլ Դէվիտ, Մանչեստերում իրլանդական մէկ միտինգի մէջ խօսելով, ցաւում էր, որ Իրլանդիայում ոստիկանութեան տակ է և մինիստրներին մինչև պարլամենտ տանում են քաղաքական շտեր հագած կոնստեբլերը. այդ պատճառով չէ կարելի ասել, թէ անգլիական կառավարութիւնը զգուշութեան միջոցներ չէ գործ դնում:»

—Լրագիրներին հեռագրում են, որ անգլիական պատգամաւորների ժողովում Գլադստոնի արած յայտնութեան դէմ, որի մէջ նա կարծես պայմանական ձևով էր ընդունում սուլթանի բարձրագոյն իրաւունքները Եգիպտոսի վրա, կը բողոքի Բ. Դուռը:

—Հռոմից լրագիրներին հաղորդում են. Իտալիան հաստատապէս յոյս ունի, որ Աւստրիան եգիպտական հարցի մէջ չի թոյլ տայ, որ դիպչին Իտալիայի շահերին: Իտալիայի և Ֆրանսիայի մէջ եղած յարաբերութիւնները լարված են:

—Լոնդոնի լրագիրների խօսքերով, Միխայիլ Դէվիտ, Մանչեստերում իրլանդական մէկ միտինգի մէջ խօսելով, ցաւում էր, որ Իրլանդիայում ոստիկանութեան տակ է և մինիստրներին մինչև պարլամենտ տանում են քաղաքական շտեր հագած կոնստեբլերը. այդ պատճառով չէ կարելի ասել, թէ անգլիական կառավարութիւնը զգուշութեան միջոցներ չէ գործ դնում:»

—Լրագիրներին հեռագրում են, որ անգլիական պատգամաւորների ժողովում Գլադստոնի արած յայտնութեան դէմ, որի մէջ նա կարծես պայմանական ձևով էր ընդունում սուլթանի բարձրագոյն իրաւունքները Եգիպտոսի վրա, կը բողոքի Բ. Դուռը:

—Հռոմից լրագիրներին հաղորդում են. Իտալիան հաստատապէս յոյս ունի, որ Աւստրիան եգիպտական հարցի մէջ չի թոյլ տայ, որ դիպչին Իտալիայի շահերին: Իտալիայի և Ֆրանսիայի մէջ եղած յարաբերութիւնները լարված են:

—Լոնդոնի լրագիրների խօսքերով, Միխայիլ Դէվիտ, Մանչեստերում իրլանդական մէկ միտինգի մէջ խօսելով, ցաւում էր, որ Իրլանդիայում

վիգան մեղադրել, որպէս չէ կարելի մեղադրել 1789 թ. ֆրանսիական վերանորոգիչներին այն զանազանութիւնների համար, որոնք կատարվեցան տէրրորի ժամանակ: Իրլանդացիները միշտ թշնամական աչքով են նայել հողատէրերի վրա, որոնք պոլիցիայի և զինորված ուժի օգնութեամբ են պահպանվում: Մինչև որ հողային լիգան չի հասնի իր նպատակին, որ է հողատիրութեան այժմեան սիստեմայի ոչնչացումը, ոչ մի դաշնակցութիւն հնարաւոր չէ իրլանդական ժողովրդի և անգլիական վիգերի մէջ: Ինչ որ վերաբերում է ստիպողական օրէնքին, Դէվիտ յայտնում է, որ այդ գործողութիւնը միայն մէկ հետանք կունենայ,—այն է կը բազմապատկէ յանցանքների թիւը և կը քաջալերէ գաղտնի ընկերութիւններին աւելի եռանդով իրանց գործը շարունակելու համար: Յանցանքների առաջն առնելու միակ միջոցն է, հեռացնել սեփականատէրերին և պաշտօնեաներին, որոնք ապրում են Դուբլինեան ամրոցի մէջ:

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՄՈՍԿՎԱ, 21 մայիսի: Երեկ աշխարհահանդէսի բացման ժամանակ, բացի հեռագրի մէջ յիշած անձինքներից, ներկայ էին. ֆինանսների մինիստրը, քաղաքի ներկայացուցիչները, դեսպաններ, հիւպատոսներ, էկսպօնենտներ, մամուլի ներկայացուցիչներ, նկարիչներ, պրոֆեսորներ, դերասաններ, բազմաթիւ կանայք: Աշխարհահանդէսի շինութեան մօտ հաղարաւոր ժողովուրդը ողջունեց Մեծ Իշխանին: Նախաճաշիկի ժամանակ մի շարք կենացներ առաջարկվեցան: Բացի թագաւոր կայսրի կենացից առաջարկվեցան Մեծ Իշխանի, իշխան Դոլգորուկովի, Բուլդէի և ուրիշների: Վերջին կենացները առաջարկեց Մեծ Իշխանը Մոսկվայի ծաղկման և քաղաքացիների համար: Մաղթանքի ժամանակ միտրոպոլիտի ճառը արտասանվեցաւ հեռաձայնի վրա. „մարդը ծնվում է աշխատանքի համար:“ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. Արևմտեան Սիբիրի գլխաւոր—նահանգապետութիւնը ոչնչացվում է: Կազմված է Ստեպնոյ (?) հեռաձայնի նահանգներից՝ Ակմոլինսկի, Սեմիպալատինսկի և Սեմիրեչենսկի: „Новое Время“ լրագիրը լուր է հաղորդում, որ ներքին գործերի մինիստրի օգնական Գոլովցեվ թողնում է իր պաշտօնը:

ՓԱՐԻԶ, 21 մայիսի: Ֆրանսիայի առաջարկութեամբ եգիպտական հարցը լուծելու համար status quo սկզբունքի հիման վրա երևի ևրոպական կոնֆերենցիա կը գումարվի:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 մայիսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 92 ր. 75½ կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 62½ կ., չորրորդ 90 ր. 38½ կ., հինգերորդ 90 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 217 ր., երկրորդ 210 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89ր. 87 կ., երկրորդ 89 ր. 62 կ., երրորդ 89 ր. 62 կ., ոսկի 8 ր. 5 կ.: Ռուսաց 1 ր. Լոնդոնի վրա արժէ 24,31 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 207 մարկ 50 պֆ., Փարիզի վրա արժէ 255 ֆրանկ 75 սանտիմ: Բօրսայի տրամադրութիւնը թոյլ է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 մայիսի: Լրագիրները մայիսի 22-ից հաղորդում են. Անդրկովկասեան երկաթուղու Բաթումի բաժնի վերջացնելու ժամանակամիջոցը երկարացրած է մինչև 1883 թուականի յունվարը: Նախատեսի նոր կանոնադրութեան համեմատ ծխախոտի ցանքեր ունեցողներին թոյլ է տրվում ծխախոտի գործարաններ բանալ գաւառական քաղաքներում: Ամառը Ռուսաստանում սպասում են եապօնական արտաքոյ կարգի դեսպանութեանը: Նա կը բանակցէ Սև

ծովի նաւահանգիստները եապօնական առևտրի համար բանալու և կովկասում թէյի ցանքսեր անելու մասին։ „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. կառավարչական իշխանութեան դէմ ապստամբվելու գործերը, նոյնպէս և նրանց ընդիմադրելու մասին, զօրքերի և պոլիցիայի վրա յարձակման, նրանց պարտականութիւնների կատարման ժամանակ, կամ այդպիսի պարտականութիւնների կատարման առիթով, երբ այդպիսի ընդիմադրութիւնների կամ յարձակմունքի ժամանակ կատարվում են սպանութիւններ, կամ հրդեհ են դցում կամ փորձում են այդպիսի յանցանք գործել, կամ երբ վիրաւորում են և ծեծում,—այդպիսի բոլոր գործերը կը քննեն ժամանակաւոր դատաստանական պալատները դասական ներկայացուցիչների մասնակցութեամբ։

ՀՌՈՄ, 22 մայիսի։ Երէկ երեկոյեան $6^1/_2$ ժամին Կապրերայի մէջ վախճանվեցաւ Գարիբալդի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 մայիսի։ „Прав. Вѣстн.“ հաղորդում է որ Ռուսաստանը ստացել է հրաւէր մասնակցել Կ. Պոլսում գումարվելի մեծ պետութիւնների կոնֆէրէնցիային եգիպտական հարցի առիթով։ Ռուսաստանը ընդունեց այդ հրաւէրը։ „Journal de St. Petersbourg“ հելքում է այն լուրը թէ բարրերի ծրագիրը ընդունված լինի բոլոր պետութիւններից։ „Գոլոսին“ գրում են որ երկաթուղիների վարչութիւնների և „Շոգենաւերի ու առևտրի“ ռուս ընկերութեան մէջ համաձայնութիւն կայացաւ բեռների անմիջական յանձնման մասին Սև ծովի նաւահանգիստներում։ „Նովոե Վրեմիա“ հաղորդում է, որ Ֆինլանդական սէյմի յանձնաժողովներից մէկը մշակեց մի խնդրագիր Ֆինլանդիայում մամուլի ազատութիւնը մացնելու մասին։ „Նովոստի“ լրագրին գրում են, որ Մոսկվայի աշխարհահանդէսը նայելուց յետոյ, Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ յայտնեց, որ թագաւոր կայսրը տեղեկութիւններ էր հարցնում այն տպաւորութեան մասին որ գործում է հանդէսը, և նորին Բարձրութիւնը տեղեկացրեց, որ հանդէսը անյանդիմանելի է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**КЁЛЕРСКАЯ УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.**

5—50

Մի ԵՐԻՏԱՍԱՐԴ որ աւարտել է Թիֆլիսի ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ինստիտուտի ուսման ընթացքը, ցանկանում է Թիֆլիսի հայոց ուսումնարաններում ՈՒՍՈՒՑՉԻ պաշտօն ունենալ։ Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատան մէջ։

5—10

**ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ**, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

## ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐ 50 կ., ՇԳԹԱՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾԻՆՆԵՐ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., գլխարկներ 1 ր., ՀԸ ԹՐՋՎՈՂ վերարկուներ 6 ր., շչէօակա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. դիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, արիկօ, ԱԼԲՈՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան։

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾԲՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՅՈՒ

37—50

## ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Հայոց ծխական ուսումնարաններում։

Մայիսի 18 և 19-ին կաթող. ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 20-ին Զորաբաշի ս. Գէորգ եկեղ. ուսումն.
— — 22-ին Շամքորեցոց եկեղ. ուսումն.
— — 24-ին ս. Մինաս եկեղ. „Իշմիրեան“ ուսումն.
— — 25 և 26-ին կուկիա ս. Աստուածածին եկեղ. ուսումն.
— — 27-ին ս. Կարապետ եկեղ. ուսումն.
— — 28 և 31-ին Աւետաց եկեղ. տղ. և օր. ուսումն.
Յունիսի 1, 2 և 3-ին Հաւլաբ. Մարիամեան օր. ուսումն.
— — 4 և 5-ին Թանդոյեան օր. ուսումն.

Հարցաքննութիւնները կը սկսվեն առաւօտեան 8 ժամին։ Թեմական վերատեսուչ Գ. Բարխուդարեանց։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

Արժրանալ գալիերեում, № 144 ծանրոցում է արժան դիտելի Վիեննայի Լանգենմարկտի մեծամեծ ֆաբրիկայի ամեն տեսակ մետաղեայ քարերը, Վիեննայի ՀԱՅԵԼԻՆՆԵՐԸ և ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ։

45—60

ԹԻՖԼԻՍ-ԲԱԳՈՒ երկաթուղու նոր կառուցած կայարանի մօտ Եսիֆ Եակովլեվիչ ԻԼԵԱՇԵՎԻՉ ծախում է մօտ 3000 քառակուսի սաժէն ՀՈՂ ամբողջութեամբ կամ ՄԱՍԵՐՈՎ այն գներով, որոնցով անցեալ տարի ծախված է երեք անձանց։ Այդ հողի մօտ այս տարվայ վերջը կանցնի ՁԻԱՔԱՐՇ երկաթուղի։ Իլեաշեվիչի բնակարանը գտնվում է „Путей Сообщенія“ վարչութեան մօտ, տուն Բարնօվի № 9։

1—2 (ուրբ.)

Лечебница Общества Покровительства животныхъ, Песковская улица д. Гврити-швили. Пріемъ больныхъ съ 8 до 9 часовъ утра ежедневно, за исключеніемъ воскресныхъ, праздничныхъ и табельныхъ дней.

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ Հովանաւորութեան Թիֆլիսի Ընկերութեան բժշկանոցը գտնվում է Սաղի վրա, Պեսկովսկայա փողոց, տուն Գվրիտի-շվիլի։ Ընդունելութիւն հիւանդ կենդանիների ամեն օր, ժամը 8-ից մինչև 9 առաւօտեան, բացի կիրակի և տօն օրերից։

10—10

Въ Редакціи газеты «МШАКЪ» Продается БРОШЮРА „ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“ Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Լույս տեսաւ Տիգրան Նազարեանի հրատարակութիւնների VI գրքոյկը Զ. Դիկկենսի „Հարս և Սկեսուր“ թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի։ Գրքոյկի վերջը իբրև յաւելուած տպուած են գրականութեան վերաբերեալ յայտարարութիւններ, առաջարկութիւններ և այլն։

Գինն է 15 կ.

Հասցէն Тифлисъ. Тиграну Назарьянцъ.

# JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles
6 mois. . . 4 —

S'adresser à F. Salles, avocat
1. Weihburggasse 9. (Vienne)

Sans ajouter le titre du journal.

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ, ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուսմիվալնիկներ մրամրանի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոնները. (գուլաններ) ըէվոլվէրի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսոնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոտներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ութմներ, բրիտանկի չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրամամալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշի, կանվերաներ, սուրդուչ, մատիա, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարեսախատակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆիրաժէ, վարշավի և բրիտանկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՈՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուսարիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոգի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կոճի և շալէ (гарусъ) ֆէլչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտ պատրաստ գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հեռաւոր հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

57—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.


Дозволено цензурою, Тифлисъ, 24 Мая 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Мелик. ул., каз. д.